ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2024 թվականի №-Ա

«ՊՈՈ ԷՄ ԷՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի օգոստոսի 27-ի «Ռ.Դ.Մ.Ս. ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №344Ա որոշմամբ «Ռ.Դ.Մ.Ս. ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №1095 թույլտվությունը, որը Հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 21-ի №52Ա որոշմամբ վերաձևակերպել է «Պոո էՄ էՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) անվամբ,

բ) ռադիոհաճախականության օգտագործման №1095 թույլտվության գործողության ժամկետը սահմանվել է մինչև 2024 թվականի օգոստոսի 27-ը, և Ընկերությունն այն երկարաձգելու հայտով չի դիմել Հանձնաժողով, ուստի թույլտվությունը 2024 թվականի օգոստոսի 28-ից համարվում է դադարեցված,

գ) մինչև 2024 թվականի օգոստոսի 27-ը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժերի վճարման՝ Ընկերության պարտավորությունը կազմում է 20 612 (քսան հազար վեց հարյուր տասներկու) դրամ, որից 19 728 (տասնինը հազար յոթ հարյուր քսանութ) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 884 (ութ հարյուր ութսունչորս) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ, 17.1-ին հոդվածները, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2024 թվականի օգոստոսի 27-ը հաշվարկված 20 612 (քսան հազար վեց հարյուր տասներկու) դրամ պարտքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
3. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2024թ.